


# Մարգիս Կիրակոսեան



## Կենսագրական տուեալներ

- Բանատեղծ, գրականագետ, թարգմանիչ, խմբագիր, կրթական եւ մշակութային գործիչ:
- Ծնած է 1950 Փետրուարին, Հալէպ, ուսանած է Քարէն Եփփէ Ճեմարանին մէջ:
- 1970-ին կը տեղափոխուի Պէյրութ եւ կ'ուսանի Սէն Ժոզէֆ համալսարանի հայագիտական քաժանմունքին մէջ: Նոյն ատեն մաս կը կազմէ «Սփիւռք-գարուն»ի, ապա «Բագին»ի երիտասարդական խմբակներուն:
- Աշխատակցած եւ աւելի ուշ մաս կազմած է «Ազդակ» օրաթերթի եւ «Բագին» ամսագրի խմբագրական կազմերուն:
- Հայ գրականութեան ուսուցիչի պաշտօն վարած է Պէյրութի Ճեմարանին եւ Պիքֆայայի դպրեվանքին մէջ:

## Կենսագրական տուեալներ

- Եղած է վարիչ տնօրէն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կրթական հայագիտական գրասենեակին: Մաս կազմած է Արեւմտահայերէնի Պաշտպանութեան յանձնաժողովին:
- Կը մեռնի Յուլիս 2015-ին՝ քաղցկեղէ:
- Հրատարակած է «Այս է արիւն իմ» (1973), «Այս է մարմին իմ» (2004), «Ականեալ ձայներ» (2015) բանաստեղծութիւններու հատորները: «Օրհներգութիւն մեծաքանչիւն» հայերէն լեզուին նուիրուած գրութիւններու հաւաքածոն: « Կարծես երազ մը ըլլար» քնարավէպը (2016): «Մայրիներու ծիածանը»(2010) լիբանանցի եօթը բանաստեղծներու թարգմանութեան նուիրուած հաւաքածոն, ինչպէս եւ սուրիացի-լիբանանցի նշանաւոր բանաստեղծ Ատոնիսի «Դամասկոսցի միհիարին երգերը» խորագրեալ հատորը (2013):

## Կենսագրական տուեալներ

- Ունի անտիպ բանաստեղծական հատորներ:
- Ունի նաեւ բազմաթիւ յօդուածներ, գրութիւններ ու գրախօսականներ նուիրուած հայ թէ արաբ գրողներու:
- Արժանացած է Հայաստանի հանրապետութեան «Վարչապետ» յուշամետալին, Հայաստանի Հանրապետութեան «Մովսէս Խորենացի» շքանշանին, Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան նախագահի «Երախտագիտութիւն» մետալին, Հայաստանի Ազգային գրադարանի «Յակոբ Մեղապարտ» յուշամետալին, Սուրիոյ մշակոյթի նախարարութեան «Ապի Ալ Ալաա Ալ Մաարի» պատուագրին, եւ յետ մահու Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանին:

# Մենսագրական տուեալներ



## Ս. Կիրակոսեանի քերթողութիւնը

- Սարգիս Կիրակոսեանի բանաստեղծութիւնը գլխաւորաբար ազատ, արդիապաշտ դպրոցին կը հետեւի, ուր հայերէն լեզուի հարստութիւնը եւ սեմպոլիստ, խորհրդապաշտ պատկերներ կը գտնենք:
- Ձեզի գլխաւորաբար քանի մը բանաստեղծութիւն պիտի կարդամ, յարաբերաբար իր աւելի պարզ գործերէն, նիւթ ունենալով՝ լիբանանեան քաղաքացիական պատերազմը, որ մենք ապրեցանք, սիրային բանաստեղծութիւն մը եւ այլ կտոր մը: Հետաքրքրականօրէն, ամէն գրութեան տակ, ստեղծուած օրուան թուականը կայ, այսինքն մէկ ներշնչումով գրուած:

